Յաջորդ թուով ի Նպաստ Օրիորդաց դպրոցի նուիրատուաց անուանքը և նուէրքը, և ի բացմանն հանդէսի ընթերցեալ ճառը կը հրատարակեմք։

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂԱՓԻՐԵԱՆՑ.

Ըստ հրամանի Վեհ. Կաթողիկոսի՝ ի 19ն ամսոյս ընդ երեկս Աղէքսանդրապօլոյ Առաջնորդական փոխանորդ Արժ. Գրիգոր վարդապետ Աղափիրեանց եկն ի Մայր Աթոռս։

ՆՈՐ ՁԵՌՆԱԴՐԵԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Ի 26 ամսոյս՝ Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գէորգ Ս. Կաթողիկոս ամենայն Հայոց սուրբ Պատարագ մատոյց և Եպիսկոպոս ձեռնադրեց ի միաբանից Մայր Աթոռոյս զԳրիգորիս Ծ. Վարդապետն Յովհաննէսեան Փիլիպպեցի, զՓոխանորդ Աղէքսանդրապօլոյ զԳրիգոր Վարդապետ Աղափիրեանց և զանդամս Սինոդի զՄեսրովբ Վարդապետ Սմբատեան և զՅովակիմ Վարդապետ Տէր-Գրիգորեան։

Բարեմաղթեմք վասն Նոցուն Գերապատուութեանց՝ զի կրօնական այս բարձր՝ վսեմ և միանգամայն ծանրալուծ Եպիսկոպոսական պաշտօնի ասպարիզի մէջ առաւել ևս ոգևորեալ՝ Եկեղեցւոյ հարազատ հաւատարիմ և անձնանուէր Հովիւք հանդիսանան և փայլին առաքինութեամբ, և Հայաստանեայց բազմակարօտ որդւոց բարեխնամ և արթուն Հայրք և խնամածուք լինին։

ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ

ՀԱՅՈՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ.

Գեր. Գրիգորիս Սրբազան Եպիսկոպոս Յովհաննէսեան Փիլիպպեցի կարգեցաւ ի պաշտօն Առաջնորդութեան վիճակին Ամենափրկչեան Ս. Խչ. Վանուց Նոր-Ջուղայու՝ այս է Հնդկաստանի և Պարսկաստանի։

Նորին Գերապատուութեան ի Կարս քաղաք Շիրակայ և ի թեմս Վիճակին իւրոյ աւելի քան զչորս ամս Առաջնորդութեան միջոցում՝ իւր հօտին վերայ ցոյց տուած խնամք և հոգացողութիւն, Խօշավանուց վերանորոգումն և բարեկարգութիւնն, նաև դպրոցաց յառաջադիմութեան անխոնջ ջանքը արդարև գովութեան արժանի են, որովք և ժողովրդեան համակրութիւնքն առ ինքն գրաւած էր, բայց յինչ և իցէ պատճառս յանցելումն կամովին հրաժարեալ իւր վիճակէն՝ ի Պօլսոյ ուղղակի դիմեց առ Վեհ. Հայրապետն ի միաբանակցութիւն Մայր Աթոռոյս։

Իսկ ամսոյս սկիզբներում վախճանելով Հնդկ. և Պարսկ. վիճակաց Առաջնորդ Մովսէս Արքեպիսկոպոս՝ արժան դատեց Վեհ. Կաթողիկոս նշանակել զնա ի տեղի հանգուցելոյն, և յառաջիկայ Ապրիլ ամսոյ սկիզբներում պիտի մեկնի աստի երթալ ի Սպահան։

Արդ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոսի անցեալ պաշտօնին մէջ ցուցած ժրաջան և արթուն գործունէութիւնքն գրաւական կհամարին յառաջակայ պաշտօնին մէջ ունենալիք վարմանց և ընթացից, և անշուշտ եմք՝ զի Նորին ուսումնասէր՝ բարեկիրթ և եռանդուն զգացմանց ազգօգուտ արդեանց և ջանից ի մասին գոհ պէտք է լինին մեր սիրելի ազգայինք որ ի Հնդկաստան և ի Պարսկաստան, և իւրեանց վաղեմի տրտունջք և դժգոհութիւնք պիտի փոխարկուին յուրախութիւն և ի մխիթարութիւն։

ԳՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԻԺ.

«ՄԻ ՏԱՐ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԶԻ ՄԻ ԳՈՂԱՑԱՅՑ»:

Եթէ ժրաց ձեռքերն անգործ լինին յօգնականութիւն աղքատաց՝ հարկաւ ամենափոքր իրականութեան անընդդիմադրելի հարկապահանջութեանց մէջ տեղի պիտի բռնէ առաջարանս, որոյ հաւաստիքն դարևոր ժամանակներով յառաջ աշխարհիս՝ իմաստութեամբ, առաջին և վերջին մարդըն, քաջ գիտելով՝ կնքած է իւր բազմափորձ և իմաստալեաց հանճարովն, ասելով. մի՛ տար աղքատութիւն, զի մի՛ գողացայց։ Որոյ ճշմարտութեան այսօր և Պարսկաստան հաւատարիմ վկայ է հանդիսանում։

Քանզի՝ որոց դառն էր ի լիութեան՝ պտուղ գողութեան, արդէն նոցա սովով քաղցրացաւ նոյնըն, ըստ որում գերադաս է ինքեանց զինու դատաւորացն զրաւել իւրեանց կեանքն, քան թէ բռնութեամբ սովու, վասն որոյ այս ընտրութեամբ ի 20 Յունվարի Ներկայ ամի, ութն անձինք ընկճելով սովու սաստկութեան լծին տակ, կպարտաւորին գողութեամբ իւրեանց օրական պարէնն գտանել, ուստի կխորհին իւրեանց մտադրութեանն գործիք և յառաջընթաց լրտես գտանել զոմն պառաւ, և կյաջողին, վասն զի գտած պարսկապառաւն ցերեկեան մանրամասնաբար դիտողութեամբ մին հարուստ պարսիկ վաճառականի տան ստացւածոց տեղիքն հանգամանօրէն կներկայացնէ իւրեան թելադիր և գողութեան տրամադիր անձանց, զուարթադէմ դիմօք իբրև աւետաբեր հրեշտակ առ նոսա փութալով. որոց տեղեկութիւն նկարագրելէն ետքը՝ փութապէս կմեկնի կարծեաց տեղիք չտալոյ առթիւ, իսկ գողութեան տրամադիրքն կպատրաստուին ի կատար ածել իւրեանց դիտաւորութիւնն, ուստի երբ քունն իւր մխիթարական սփոփանքն բնականաբար բանականութեան

աննախանձաբար կառատաձեռնէ, սպառազինեալ կզինեն այն հէգ և թշուառի լռեսեալ բնակարանն, ուրանօր իւրեանց կարողութեան ներողութեանն չափ կողոպուտն առնլով՝ և արտաքուստ աւարեալ տան դուռն ամրափակելով՝ իւրեանց օթեւանն կվերադառնան, թէպէտ տանուտէրն կիմանայ գողոց մուտքն, բայց դժբաղդաբար լռութեան կդատապարտուի, կրկին պատճառաւ, մի՛ զի իւր կենաց վտանգն ի ներքուստ կյաղթէր ընչից քաղցրութեան, երկրորդ՝ զի գողոց զօրութեանն դիմադրելու անզօր էր ։ Վերջապէս գործողութիւնն այս արարքով անցնելէն զկնի, գիշերոյն՝ ողջունիւ ցերեկէն մեկնելուն կետին վերայ դրացւոյն այցելութեամբ փակեալ դռներն կբացուին, և տանուտէրըն երկիւղի կապանքից ազատվելով՝ յուսահատ սրտիւ կներկայանայ քաղ. Ատենին ի յայտնութիւն ամենայն եղելութեանցն, այսպէս ասելով, Տէր դատաւոր, գողոց անիրաւութիւնը զրկելով զիս յարդար վաստակներէս՝ աղքատութեան դատապարտեց, եթէ ատենիս արդարութիւնն յօգնութիւն ինձ ոչ փութասցէ, և կարող էք դիւրաւ յաջողել. Տէր Դատաւոր, քանզի անցից կերպարանքը յայտնապէս ցոյց կտան զգողսն, ըստ որում մին չար և խորամանկ պառաւ երեկ երրորդ ժամումն ծպտեալ ընդ կերպարանս աղքատի մեր տունն այցելեց, ամենայն մտից և ելից տեղեկանալով, որոյ յայսկոյս յայնկոյս սուէպ հայեցուածքը ո՛չ գողութեան նախընթաց պարագայ, այլ յոյժ կարօտութեան ապացոյց դատելով և առ երեւոյթին աղքատ վիճակին՝ անգիտաբար խղճալով՝ ազատ ողորմութեան տրօք շահեց ինքզինքն. և ահա ժամանակն կրկին գիշեր չտեսած, այս դժբաղտութիւնըն մեզ պատահեց ։

Ցնծութիւն, ցնծութիւն, քանզի մինչդեռ ընչազուրկին բերանն նահանգական կառավարչին ունկան հետ գողութեան հանգամանաց վերայ վաճառականութիւն կանէին, ճշմարտութիւնն փառաւոր յաղթանակաւ դռնէն ներս կմտանէ, քանզի նոր գուժարեր կներկայանայ նոյն գողութեան լռեսպառաւի մահուան վճիռն խնդրելու. Թողնենք Ատեանն իւր դատողութեան և քննութեանըն, մենք անցնենք պառաւի սպանութեան գործին և պատճառին, որ որոգայթ է գողոց յայտնութեանն և նոցա դատապարտութեանցն. ըստ որում այն գողերն երբ իրաց եղելութեան վիճակին կտեղեկանան լռեսաց միջոցներով՝ կենաց կորստեան երկիւղն անմիջապէս կթագաւորէ իւրեանց սրտումն, զի լաւ գիտէին, եթէ այն պառաւի տկար և կանացի բնութիւնն՝ տկար և անզիմադիր է սաստկութեան սպառնալեացն, որով անշուշտ պիտի իւրեանց գողութիւնն յերեւանս հանէ ։ Ո՞վ գողոց յիմարական նախատեսութեան. այն թշուառ պառաւն վարձատրելոյ պատրանքով իւրեանց մօտ կոչելով՝ նորա կեանքն սրով կկընքեն, որոյ մարմինն գողօնից հետ կպահեն. որպէս զի նորա հետ եւս ծածկուի իւրեանց գողութիւնն. բայց ի՞նչ, թէպէտ հեռատեսութիւն և կենաց ազատութիւն էին կարծում, բայց ո՛չ, այս անխորհուրդ գործն իւրեանց պատժապարտութեան պատճառաւ պիտի լինի, ըստ որում այն չարաճճի պառաւի ընտանիքն ծածկաբար դիմելով կբողոքեն առ դատաւորն դժբաղդ գողոց արարողութեան համար, ինչպէս վերը յիշեցինք, և նորանց անուաներն և տեղն կյայտնեն նորան. դժբաղդութիւն դժբաղդութեանց վերայ և դատապարտութիւն իշխան նոցին. քանզի ոստիկանութիւնն զինուորացն զնոսա յատեանս ածել հրամայեց. և յորոց ամբողջապէս այն գողօնքն ստանալէն և արդարապէս կշռադատելէն եաքը՝ անգութ դահճաց ձեռքն կը յանձնէ զվճիժապարտսն, որոց գլխաւորի կեանքն փոխանակ գլխոյն պառաւին, որոյ սպանիչն իսկ ինքն եղած էր, կնքել կհրամայէ՝ զգլուխն ի բաց բառնալով ի մարմնոյն, իսկ մնացելոց աջ ձեռքն հատանել ։ Դատաստանը այս կերպ վախճան առնելէն եաքը՝ ուշադրութիւնդ դարձո՛ մեւս մխաձեռների վերայ, ո՛վ ծիծաղաշարժ կամ տրտմառիթ, չգիտեմ, ո՞ր ածականն է յարմար տեսարանիս, որում ականատես իսկ լինելով՝ կամիմ յայտնել, Ցարգոյ խմբագիր, վասն զի պատժապարտեալքըն կտրած աջ ձեռքերն ձախումն բռնելով՝ վիրաբուժի տունն կփութային կեանքերն փրկելու դիտաւորութեամբ, քանզի արիւնն անընդհատաբար կհոսէր, զանձինս ներկանելով. վերջապէս վիրաբուժութեան արուեստին հմտութեամբ հատեալ ձեռաց արիւնն դադարեցաւ, ուր փրկչին և բարերարին երախտագիտութիւն մատուցանելոյ փոխանակ՝ ապերախտութիւն կհատուցանեն նորան, ըստ որում դուրս գալու ժամանակն նորանցից մին՝ բարերարի կօշիկներն ձախ ձեռքով գողացած իւրեանց նորան վճարած վարձուց փոխարէն, կըմեկնին ։

Նազար Նազարբէկեանց ․

Ի 12 Փետրվարի 1872 ամի․

Ի Դորպատ:

---

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՊԱՏԿԵՐ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ԱՍՏՐԱԽԱՆԻ․

---

## Խմբագրութեան Արարատ ամսագրոյ․

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց երկսեռ Հոգևոր Դպրոցաց ընդ սմին առաքելով ի Խմբագրատուն Արարատայ զՀամառօտ Հաշուեպատկեր մտից և ծախուց երկսեռ Դպրոցաց վասն 1871 անցելոյ ամի և զցուցակ թուոյ Ուսումնարանաց Ուսուցչաց, ուսանողաց և վերակացուաց, խոնար-